**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար <<Երևանի թիվ 109 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 պայմանագրում 2020 թվականի փետրվարի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | Կատարողի առաջարկության և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության հիման վրա աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում: |
| Փոփոխության նկարագրություն | <<Երևանի թիվ 109 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## 17.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 գնման պայմանագրի

ք. Երևան 13 փետրվար 2020թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով <<Երևանի թիվ 109 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 17.10.2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածում աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող բոլոր տեղերում <<119>> թիվը փոխարինել <<149>> թվով:

բ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 2 (երկու) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027894
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Վ. Վաղարշյան 24/1, բն. 43
<<Յունիբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 24104005885100
ՀՎՀՀ 00102911

Տնօրեն՝

______________ Ա. Կարապետյան
(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված*
*17.10 2019թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 պայմանագրի*
*13.02.2020թ. կնքված N1 համաձայնագրի*

*<<Հավելված N 1.1*
*17.10. 2019թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/29 պայմանագրի*

<u>**Օրացուցային գրաֆիկ**</u>

**«Երևանի թիվ 109 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի նոր շենքերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների**

| ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը | Շաբաթների քանակը (ընդամենը 149 օրացուցային օր) | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| Ելակետային նյութերի հավաքագրում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ, այդ թվում շինությունների եռաչափ մոդելավորումը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Նախագծի լրակազմի քաղաքաշինական փորձաքննության | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| իրականացում և դրական եզրակացության ստացում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական
տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011027894
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_________________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**

<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ
ք. Երևան, Վ. Վաղարշյան 24/1, բն. 43
<<Յունիբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 24104005885100
ՀՎՀՀ 00102911

Տնօրեն՝

_________________ Ա. Կարապետյան
(ստորագրություն)

Կ.Տ.